

հար տաւար՝ կը մնային ենթակայ աւելի լուրջ նեղութեանց: Գիւղերը միշտ ասոնցմէ դուրս ունէին քանի մը սանկ դժուար որակելի մարդեր ալ, ընդհանրապէս թուրքերու հետ լաւ երես յարդարող ստորադաս պաշտօնեաներու համակրութիւնը ալպանացի պահապաններու ընձեռուած ասպնջական եւ այլ կարգի աւելի տրտում հաշիւներու հերոսներ, որոնց տունը հացը չէր պակսեր կայէն առաջ, ու բակին քանի մը կով միշտ կը խօսէին կաթէն, կարագէն: Այս առաւելութիւնները սա մարդերը հասկնալի է, որ վերածէին աղաներու^(*), պզտիկ գիւղին համար անհրաժեշտ, կռթնող թուրք աւելի մեծ աղաներու, բոլորն ալ իրենց կաղապարով, բացի նիւթականէն, անբաղդատելիօրէն բարձր, որոնցմէ կ'առնէին սերմնցու, առանց տոկոսի պարտք, տուրքը վճարելու համար պայմանեալ ժամուռն, ու գեղը շահագրգռող հարցերու մէջ ունէին ձայն մը՝ տէրտէրին ու վարժապետին հաւասար:

Հատոր մը լման անբաւական կող դայ այս դարու սկիզբին ու քանի մը հարիւր տուննոց հայ գեղին բոլոր դարտերը, բոլոր երեսները թողլովի առնելու: Տուի այս քանիկը, Մաթիկ Մելիքիանեանը, գէթ իր հոգին հաճեցնելու համար: Լուռու մասը անհուն է սակայն:

(*) Աղա (անդամ): Ծերերու խորհուրդին անդամները քիչ-քիչ առնուեցան աւելի նուազ տարուողներէն, այսինքն՝ նիւթական որոշ տարողութեամբ մարդերէ: Գիւղապետութիւն, աշխարհի մէջ բան մը ըլլալու, խելք ունենալու, իր գոհացումը կը գտնէր այդ անիմաստ ժողովականութեան մէջ, քանի որ իրենց պաշտօնն էր իրենց նիւթէն կախ կնիքները թուրքի մը տակ փակցնել, երբ ատիկա հրամայուէր իրենց: Բայց աղային կիներ թաղականի մը կնիքէն աւելի կ'արժէր իբր յիմար: